



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

նոյեմբերի 2018 թվականի №Ա
ք. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓՈԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի հունիսի 6-ի №199Ա որոշմամբ հաստատված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվում մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը,

բ) 2018 թվականի երրորդ եռամսյակի՝ Կարգով սահմանված տեղեկատվությունը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հանձնաժողով է ներկայացրել սահմանված ժամկետից ուշ՝ 2018 թվականի հոկտեմբերի 15-ի փոխարեն 2018 թվականի հոկտեմբերի 16-ին,

գ) Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ 2018 թվականի 3-րդ եռամսյակի տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են որոշ թերություններ, մասնավորապես.

1. լրացված չեն պահանջվող հզորության և կառուցվող տեղակայանքների առավելագույն լարման մակարդակի վերաբերյալ տվյալները՝ 100 դեպք,
2. նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը դիմող անձին ներկայացնելու ամսաթիվն ավելի ուշ է, քան դիմողից միացման պայմանագիր ստանալու ամսաթիվը՝ 36 դեպք,

3. նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը դիմող անձից ստանալու ամսաթիվն ավելի ուշ է, քան դիմող անձին այն ներկայացնելու ամսաթիվը՝ 9 դեպք.

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը 2018 թվականի հոկտեմբերի 17-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ վերջինիս կողմից Կարգի 2-րդ կետով սահմանված ժամկետի խախտման և Տեղեկատվությունը թերություններով ներկայացման փաստերի ուսումնասիրության նպատակով: Լրացուցիչ հանգամանքների ուսումնասիրության նպատակով վարչական վարույթի ժամկետը 2 անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը իր 2018 թվականի հոկտեմբերի 27-ի №28-18 և նոյեմբերի 1-ի №41-18 գրություններով ներկայացրել է պարզաբանումներ առ այն, որ Տեղեկատվությունն ուշ ներկայացնելը պայմանավորված է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատման ընթացքում ծագած ծրագրային խնդիրներով, իսկ Տեղեկատվության մեջ առկա թերությունները հիմնականում պայմանավորված են Հանձնաժողովի 2018 թվականի №140Ն որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում Ընկերության ԷյսիԲիես (AcBs) ծրագրային համալիրում իրականացված փոփոխություններով, որոնք արդեն շտկվել են,

զ) Հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79Ա որոշմամբ հաստատված՝ Ընկերության 0092 լիցենզիայի պայմանների (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) 4.19-րդ կետի համաձայն լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացված լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար.

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 2-րդ և Լիցենզիայի պայմանների 4.19-րդ կետերը: Իսկ Ընկերության պատճառաբանությունները չեն կարող դիտվել որպես թույլ տրված խախտումների օբյեկտիվ պատճառներ և ազատել վերջինիս պատասխանատվությունից,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը նախազգուշացնել՝ Կարգի 2-րդ և Լիցենզիայի պայմանների 4.19-րդ կետերը խախտելու համար:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Ս.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
նոյեմբերի 2018թ.